

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական
համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета
им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԿՆԵՐՆԵՐԸ
Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

13 (17)

ԵՐԵՎԱՆ 2024
ЕРЕВАН 2024
YEREVAN 2024

*Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի
անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից*

*Печатается по решению Ученого совета филиала Московского государственного
университета им. М.В. Ломоносова в г. Ереване*

*Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State Univer-
sity M.V. Lomonosov in Yerevan*

«ՈՒՌՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հան-
դեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի
մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրու-
թյուն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնա-
կանների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսա-
յականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորու-
թյան ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:


Назначение научно-методического журнала **«ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ
РУСИСТИКИ»** рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как
отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения
внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым
популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов,
грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.


ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №13
(17). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2024. – 314 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***



 ORCID: 0000-0002-4377-1601

 ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

КОНЦЕПТУАЛЬНАЯ РОЛЬ ЗООМОРФНЫХ МЕТАФОР В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЭКОНОМИЧЕСКИХ ДИСКУРСАХ

Ани Саркисовна Арутюнян

ani.harutyunyan88@gmail.com

*К.ф.н., преподаватель кафедры английского языка,
Государственный университет им. В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения*

АННОТАЦИЯ

Концептуальная метафора как когнитивный инструмент имеет широкое распространение в экономическом дискурсе. Она играет важную роль в интерпретации экономической деятельности ввиду сложности и специфики экономического дискурса. Путем обобщения и наблюдения в данной статье анализируются лингвокогнитивные аспекты концептуальной метафорической модели *ценовые колебания – животные движения* в английском и армянском экономических дискурсах, подчеркивая культурное разнообразие и национальную окраску концептуальных метафор. В статье делается вывод о том, что данная концептуальная метафорическая модель существует в обоих языках, но языковые выражения внутри одной и той же модели отличаются из-за культурных различий.

Ключевые слова: концептуальная метафора, экономический дискурс, метафорическая модель, область-источник, область-цель.

Տնտեսական բարդ գործընթացներն ու իրադարձությունները վերացական են ու բարդ հանրային ընկալման համար, հետևաբար, փոխաբերությունը կամուրջ է այդ վերացական երևույթից դեպի կոնկրետ երևույթ: Տնտեսական խոսույթում փոխաբերական լեզվի կիրառումը ծառայում է նկարագրվող երևույթի առավել տեսանելի պատկերմանը: Փոխաբերությունները կարևոր ճանաչողական գործիք են՝ աշխարհի տնտեսական հարաբերությունների արտացոլման և կադապարման գործընթացում: Փոխաբերությունը հնարավորություն է տալիս ընկալել տնտեսական բարդ ու խրթին գաղափարները՝ ավելի կոնկրետ, ֆիզիկական իրողությունների միջոցով, այսպիսով, ծառայելով որպես ընկալման, ճանաչողության գործիք:

Տնտեսական խոսույթին ներհատուկ են գնային անկանխատեսելի ցատկերն ու կտրուկ անկումները, որոնք հրաշալի նկարագրվում են կենդանուն բնորոշ շարժումներով:

Ճանաչողական լեզվաբանությունը նպատակ ունի ներկայացնել լեզու-ճանաչողություն կապը և աշխարհի լեզվական պատկերի կադապարումը լեզվակրի գիտակցության մեջ: Ճանաչողական փոխաբերությունը կադապարում է մարդու մտածողությունը, ուստի ավելին է, քան պարզապես լեզվական միավորը:

Փոխաբերությունը, ըստ Ջ. Լեքոֆի և Մ. Ջոնսոնի, յուրահատուկ կամուրջ է՝ ծանոթ երևույթից դեպի անծանոթ երևույթ: Ճանաչողական լեզվաբանության դիտանկյունից՝ ճանաչողական փոխաբերությունը մեկ ճանաչողական տիրույթի ընկալումն է մեկ այլ ճանաչողական տիրույթի միջոցով [5]:

Ճանաչողական փոխաբերության տեսության հիմնական նախադրյալն այն է, որ փոխաբերությունը ոչ թե ուղղակի լեզվի ոճական միջոց է, այլ մտքի փոխաբերական արտացոլում [6: 258]:

Հայտնի լեզվաբան Վ. Գակը համամիտ է Ջ. Լեքոֆի և Մ. Ջոնսոնի այն տեսակետի հետ, որ անհնար է մտածել առանց փոխաբերությունների, և փոխաբերությունը բնորոշ է մարդու մտածողությանն ու լեզվին: Ըստ Վ. Գակի՝ փոխաբերությունը մտածողության և աշխարհընկալման համընդհանուր միջոց է, որի շնորհիվ լեզուն անդադար վերափոխվում է [1: 483]:

Ընդգծելով և կարևորելով փոխաբերության ճանաչողական բնույթը՝ Ա. Չուլիինովը նշում է, որ փոխաբերությունները մտածողության անբաժանելի մասն են կազմում և արմատացած են մարդկային մտածողության ճանաչողական համակարգում: Նրա ձևակերպմամբ՝ փոխաբերությունը մարդկային մտածողության համաբանական կարողությունների դրսևորում է [2: 37]: Ըստ հեղինակի՝ «լեզուն ոչ միայն մտածողության, այլև տեղեկատվության փոխանցման միջոց է: Եթե մարդը մտածում է փոխաբերաբար, ապա, միանգամայն բնական է, որ տեղեկատվության փոխանցումն իրականացվում է փոխաբերությունների միջոցով» [3: 61]:

Փոխաբերությունները տնտեսական խոսույթի անբաժանելի մասն են կազմում: Տնտեսական խոսույթը բարդ է և զարմանալի չէ, որ այն հեղեղված է տարբեր տնտեսական իրողություններ բնութագրող փոխաբերություններով:

Ջ. Կովեչեսը նշում է, որ «տնտեսություն» թիրախ տիրույթը հիմնականում արտապատկերվում է այնպիսի աղբյուր տիրույթների միջոցով, ինչպիսիք են, բույսերը, ճանապարհորդությունը, կենդանու վարքագիծը, մարդկային օրգանիզմը և այլն [4: 25]: Ընկալելով տնտեսությունը որպես կենդանի օրգանիզմ, մասնավորապես, կենդանի, տնտեսական երևույթները նկարագրվում են կենդանական տարբեր բնագոյների, կենդանական վարքագծի միջոցով, իսկ կենդանիների շարժումները հրաշալի աղբյուր տիրույթ են գնային քաղաքականու-

թյան մեջ տիրող կտրուկ, անսպասելի ցատկերն ու թռիչքները նկարագրելու համար:

Գնային տատանումները, մասնավորապես, գների աճը, զուգորդվում են տարբեր կենդանիների շարժումների հետ՝ այս երևույթները հանրության լայն շերտերի համար առավել ընկալելի դարձնելու նպատակով: Շուկայական տատանումները նկարագրող բայերի մի մասը բացառապես վերաբերում են կենդանիներին, օրինակ՝ *ճախրել, սողալ*: Սակայն ուսումնասիրության մեջ ընդգրկված բայերի մի մասը կարող են բնորոշ լինել ինչպես կենդանիներին, այնպես էլ մարդկանց, օրինակ՝ *լողալ, ցատկել* և այլն:

«Կենդանական շարժումներ» աղբյուր տիրույթի միջոցով ընկալվում ու կադապարվում է «գին» թիրախ տիրույթը: Շարժում ցույց տվող փոխաբերական արտահայտությունները բաժանվել են երկու խմբի՝ ըստ դեպի վեր և դեպի վար ուղղվածության:

Դեպի վեր ուղղվածության խմբում քննության են առնվել հետևյալ լեզվական միավորները՝ *soar, hover* (*ճախրել, սավառնել*), *climb* (*մագլցել*), *leap* (*թռչել*), *jump* (*ցատկել*), ցատկոտել, *creep higher, crawl higher* (վեր սողալ) և այլն: Դիտարկենք հետևյալ օրինակները՝

- *Wheat prices soar as Russia-Ukraine tensions flare.* (8)
- *The price of oil is hovering at a four-and-a-half month high amid concerns over disruption to supplies from the Middle East.* (9)
- *Պարենամթերքի գները թռչում են ժամ առ ժամ:* (10)
- Կառավարության պատասխանատու մարմինները **գների նման թռիչքը** բացատրում են ներմուծվող ապրանքների գների աճով և դրամի արժեզրկմամբ: (11)
- Հայաստանի **ճախրող գներ**... Հայաստանի սպառողական ապրանքների գները այս սկզբունքն են որդեգրել. այնպես են **ճախրում**, որ նույնիսկ Ազգային վիճակագրական ծառայու-

- թյունը (ԱՎԾ-ն) չի կարողանում թաքցնել այդ **ճախրանքը**: Այսպիսով, ավանդաբար ցածր գնաձուլ աչքի ընկնող Հայաստանը վերածվել է բարձր գնաձ արձանագրող երկրի, և **գների ճախրանքը** սպառնում է դառնալ խրոնիկ: (12)
- Դեպի **գենիթ ճախրող գների** ֆոնին Եվրոպայի առաջնորդները կտրուկ իջեցրել են հակառուսական հռետորաբանության թնդությունը: (13)
- *Still, gas prices have climbed by 28 cents over the past month and 32 cents since the Fourth of July...* (14)
- Պղնձի գները «**մազլցում են**» վերև (15)
- *Oil prices leaped – exceeding \$130 a barrel to touch a 13-year high – on the possibility that the United States and its allies will completely ban Russian oil and natural gas imports.* (16)
- *Gas prices are rocketing higher. The national average for regular gas jumped to \$3.51 a gallon on Friday.* (17)
- Նախանձելի օրինաչափությամբ, մի քանի ամիսը մեկ մենք զարմանք և վրդովմունք ենք ապրում որոշ ապրանքային խմբերի գների **սուր ցատկի** պատճառով: (18)
- *Ամբողջ խնդիրն այն է, [...] որ դրամը հանկարծ «չնախատեսված» ցատկեր չանի իր «ազատ լողի» ընթացքում:* (19)
- Մեր օրերում նավթի գները **ցատկում են մեկ վեր, մեկ վար**: (20)
- Պուտինը նաեւ ուշադրություն է հրավիրել վերջին օրերի շուկաների անկայունության վրա՝ ասելով, որ նավթի գները «**պարում ու ցատկում են**» և դրանց հետ միասին նաև՝ ռուբլու փոխարժեքը: (21)
- *Prices have been creeping higher, despite uncertainty about the strength of the global economy.* (22)

➤ *Oil crawls higher on U.S. hopes, but COVID rise in China caps gain.* (23)

Ինչպես ցույց է տալիս վերոնշյալ օրինակների վերլուծությունը, գնային տատանումները, մասնավորապես, աճը, նկարագրվում են բազմապիսի կենդանական շարժումներով, որոնք տարբերվում են միմյանցից ըստ իրենց անկանխատեսելիությամբ ու ուժգնությամբ: Ինչպես օրինակ, գների ռեկորդային աճը համեմատվում է դեպի երկինք թռչնի ճախրանքի, սավառնելու հետ – *soar, hover*: Հայերենում այդ անսպասելի ճախրանքն ավելի սուր նկարագրելու համար հոդվածագիրն օգտագործում է «*դեպի զենիթ ճախրող գներ*» փոխաբերական արտահայտությունը, որը ենթադրում է ամենաբարձի կետը երկնքում: Գների անսպասելի ու կտրուկ աճը նկարագրվում է *leap, jump* փոխաբերական միավորներով, քանի որ այս երկու շարժումներն էլ ընդգծում են աճի հանկարծակիությունն ու անսպասելիությունը: Հայերենում նկատելի է «*սուր ցատկ*», «*չնախատեսված ցատկ*» փոխաբերական արտահայտությունների օգտագործումը, որը կարելի է համարժեք համարել անգլերեն «*leap*» բառին:

Գների դանդաղ աճը, ինչպես երևում է բերված օրինակներից, անգլերեն տնտեսական խոսույթում նկարագրվում է «*creep higher, crawl higher*» փոխաբերական արտահայտություններով, ինչը բացակայում է հայերենում: Այստեղ հետաքրքրական է այն փաստը, որ «*սողալ*» բայը ենթադրում է հորիզոնական շարժում գետնի վրա, այսինքն, բացակայում է դեպի վեր ուղղվածությունը, սակայն հոդվածագիրն օգտագործում է «*high*» (բարձր) ածականի բաղդատական աստիճանը «*higher*» (ավելի բարձր)՝ ընդգծվելով գների դանդաղ ու աստիճանաբար վեր սողացող ընթացքը:

Ուշագրավ է, որ անգլերեն տնտեսական խոսույթն այժի է ընկնում իր փոխաբերությունների հարստությամբ, մինչդեռ հայերեն

տնտեսական խոսույթում նմանատիպ փոխաբերությունները դեռևս սակավաթիվ են, երբեմն բառացի թարգմանություններ, որոնք ներկայացվում են չակերտներում, ինչպես օրինակ, «**մազլցում են**»:

Դեպի վար ուղղվածության խմբում քննության են առնվել հետևյալ լեզվական միավորները՝ *slide* (*սահել*), *dive*, *plunge*, *sink* (*սուզվել*) և այլն: Դիտարկենք հետևյալ օրինակները՝

- *Oil's sharp **slide** has surprised markets. But some traders now see a bottom for prices.* (24)
- *Stocks fall, ruble **dives** as Russia sanctions hit world markets. The Russian ruble hit record lows on Monday while world stocks **slid** and oil **prices jumped** after the West ramped up sanctions against Moscow over its invasion of Ukraine.* (25)
- *Oil prices **dive** to 15-month lows on bank fears.* (26)
- *Oil Prices **Plunge** As Economic Woes Intensify—Here's Why That Means Gas Prices Could Soon Fall Below \$3 Per Gallon.* (27)
- *Oil, metals and wheat prices **are sinking**.* (28)
- Միջազգային շուկաներում դուլարի շարունակվող արժեզրկմանը զուգահեռ Հայաստանում եւս ամերիկյան արժույթը շարունակում է իր **գլխասպտույտ անկումը**. Թեև Կենտրոնական Բանկում միշտ հակված են պնդել, թե **փոխարժեքը լողում է**, իրականում՝ գործընթացը **սուզվելու է նման**: (29)

Ինչպես երևում է բերված օրինակների վերլուծությունից, անգլերենում գների դեպի վար ուղղվածությունը նկարագրող փոխաբերական միավորները, ի տարբերություն դեպի վեր ուղղվածության, ավելի սակավաթիվ են: Գների անկման նկարագրությունը կենդանիների շարժումների միջոցով բացակայում է հայերեն տնտեսական խոսույթում: Գների անկումը հիմնականում նկարագրվում է չեզոք բայերի միջոցով, ինչպես օրինակ, «**իջնել կամ ընկնել**»: Օրինակների նման

սակավաթվությունը կարելի է բացատրել նրանով, որ գները հազվադեպ են նվազում, հակառակը, գրեթե միշտ միտում ունեն անհաստատ, ինչպես նաև այն փաստով, որ գների կտրուկ ու անկանխատեսելի աճը վտանգավոր է և գրավում է բոլորի ուշադրությունը՝ պահանջելով համապատասխան զսպող կամ մեղմող տնտեսական քայլեր: Նկատելի է, որ բերված հայերեն հոդվածում «**սուզվել**» բայը վերաբերում է փոխարժեքի, այլ ոչ թե գնի անկմանը: Փոխարժեքի նվազումը, ի տարբերություն գնի նվազման, կրում է բացասական իմաստ:

Գնային անկանոն տատանումները՝ մեկ վեր, մեկ վար, որոնք չունեն հստակ կողմնորոշվածություն, անզլերենում նկարագրվում են «**swing**» (ճոճվել), իսկ հայերենում՝ «**լողալ**» բայերի միջոցով: Դիտարկենք հետևյալ օրինակները՝

- *Prices for everything from stocks to Bitcoin **have been swinging** sharply with the uncertainty about Russia and Ukraine. (30)*
- *Պղնձի համաշխարհային շուկայում վերջին մի քանի ամիսներին **գները լողում են** տոննայի դիմաց 4,9-5,4 հազար դոլարի միջակայքում: (31)*
- *... ազգային դրամն իր «**լողի**» ընթացքում անմիջապես մի քանի կետով **զահավիժում է**: (32)*

Բերված վերջին օրինակում, փոխարժեքի, մասնավորապես, դրամի տատանումները համեմատվում են լողի հետ, որի ընթացքում վերջինիս սրընթաց անկումը համեմատվում է «**զահավիժման**» հետ: Հայերեն տնտեսական խոսույթում գների, ինչպես նաև փոխարժեքի անկումը նկարագրվում են կա՛մ չեզոք բայերով (իջնել, նվազել, ընկնել), կա՛մ էլ մեկ ուրիշ աղբյուր տիրույթով (այս դեպքում՝ «**ջուր**»), մինչդեռ անզլերեն խոսույթում փոխարժեքի անկումը նկարագրվում է «**dive** (սուզվել)» բայով, իսկ ավելի կտրուկ ու սրընթաց անկումը՝ «**plunge** (ընկղմվել)» բայի միջոցով, որը ենթադրում է կտրուկ, խոյըն-

թաց սուզում (immediate dive), ինչը բացակայում է հայերենում: Ասվածի ապացույցն են հետևյալ օրինակները՝

- *Ռուբլին շարունակում է գահավիժել. տարադրամի հայկական շուկայում նոր ռեկորդային անկումներ են:* (33)
- *Stocks fall, ruble dives as Russia sanctions hit world markets.* (34)
- *Russian ruble plunges nearly 30% against the dollar amid sanctions over Ukraine invasion.* (35)

Համեմատելով ամերիկյան և հայ մամուլում տնտեսությունը լուսաբանող լրագրային հոդվածները՝ կարող ենք նշել, որ նույն երևույթը՝ փոխարժեքի տատանումը, բնութագրվում է տարբեր կենդանիների կատարած գործողություններ արտահայտող բայերի միջոցով՝ *ճռճվել (swing)* և *լողալ*: Նույն թիրախ՝ «փոխարժեքի տատանում», տիրույթը զուգադրվող մշակույթներում առկայացվում է միևնույն փոխաբերական կաղապարով՝ ՓՈՒՍԱՐԺԵՔԻ ՏՍՏԱՆՈՒՄԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ Է, սակայն, լեզվամշակութային ընկալման առանձնահատկություններից ու տարբերություններից ելնելով, այս կաղապարի հիմքի վրա ստեղծվող փոխաբերական արտահայտությունները տարբեր են, այսինքն, լեզվական մակարդակում նկատելի է պատկերափոխություն, երբ տվյալ փոխաբերական կաղապարը կազմող արտահայտությունները տարբեր են կամ, այսպես ասված, «միմյանց փոխարինելի են» (օրինակ՝ ճռճում և լող), ինչդեռ իմաստը՝ նույնը (օրինակ՝ փոխարժեքի տատանում):

Ինչպես փաստում է լեզվանյութը, քաղաքական իրադարձությունների տնտեսական հետևանքները առաջացնում են տարբեր աստիճանի տատանումներ՝ փոխարժեքի, շուկայում ապրանքների գների կտրուկ «ցատկ» կամ անսպասելի «ջրասուզում»: Շուկայում տնտեսական ցնցումներն առաջանում են մի շարք պատճառներով՝ համաճարակ, աշխարհաքաղաքական վերջին զարգացումներ, պատերազմ,

տնտեսական պատժամիջոցներ, քաղաքական ընտրություններ, որոնք էլ իրենց ուղղակի ազդեցությունն են թողնում տնտեսական համակարգի վրա: Շուկայի բացասական տատանողականությունը խոչընդոտում է ֆինանսական համակարգի կայունությանը՝ պատճառելով գնանկումային ճնշումներ:

Ներկայացված բոլոր փոխաբերական արտահայտություններում «կենդանի» աղբյուր տիրույթի և «գին» թիրախ տիրույթի արտապատկերման հիմքում ընկած են ՈՒՂՂԱՀԱՅԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՐ-ՎԱՐ և ՇԱՐԺՈՒՄ պատկեր-սխեմաները: Նշենք, որ ուսումնասիրված շարժում ցույց տվող բայերի մեջ կան այնպիսիները, որոնք ենթադրում են հորիզոնական՝ միևնույն ուղղությամբ շարժում, ինչպես օրինակ, «to crawl», «to creep» և «to slide» բայերը, սակայն շուկայական տատանումները բնութագրելիս ցույց են տալիս, համապատասխանաբար, վեր և վար ուղղվածություն, քանի որ շուկան մշտապես գտնվում է շարժման մեջ:

Ուշագրավ է այն փաստը, որ «գին» թիրախ տիրույթի դեպքում ՎԵՐ-ՎԱՐ պատկեր սխեման մեծամասամբ հակասում է գոյություն ունեցող այն կարծիքին, որ վեր ուղղվածությունը միշտ դրական է, իսկ վար ուղղվածությունը՝ բացասական (UPWARD MOVEMENT IS A GOOD PERFORMANCE OF THE ECONOMY vs. DOWNWARD MOVEMENT IS A BAD PERFORMANCE OF THE ECONOMY): Ավելին, այն ձեռք է բերում ճիշտ հակառակ պատկերը՝ դիտարկելով գների աճը՝ բացասական, իսկ անկումը՝ դրական երևույթ: Ինչպես ցույց են տալիս վերը նշված օրինակները, արդեն հայտնի, ընդունված կաղապարները «գին» հասկացության դեպքում գործում են հակառակ տրամաբանությամբ՝ UPWARD MOVEMENT IS A BAD PERFORMANCE OF THE ECONOMY vs. DOWNWARD MOVEMENT IS A GOOD PERFORMANCE OF THE ECONOMY:

Շարժումը ֆինանսական շուկաների էությունն է և միանգամայն տրամաբանական է բայերի նման մեծ թվի առկայությունը: Բայերը բնութագրում են գործողություններ, իրադարձություններ, իսկ գնային տատանումները ավելի հեշտ են ընկալվում հենց գործողությունների միջոցով: Բայերի փոխաբերական կիրառությունները, ի տարբերություն գոյականների փոխաբերական կիրառությունների, ունեն ավելի մեծ իմաստային հազեցվածություն և հենց դա է պատճառը, որ տնտեսական խոսույթի փոխաբերական կադապարումը հարուստ է փոխաբերական հավելյալ արտապատկերումներով, ինչը ուսումնասիրվող տեքստերը դարձնում է մի կողմից բազմաբովանդակ, մյուս կողմից՝ դյուրըմբռնելի:

Տնտեսական հոդվածների վերլուծությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ ԳՆԱՅԻՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՆ փոխաբերական կադապարը, որը տեսականիչ է ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ Է սեռանիչ փոխաբերությանը, առկա է զուգադրվող լեզվամշակույթներում, սակայն դրանցից ածանցվող փոխաբերական արտահայտությունները տարբերվում են՝ դրսևորելով որոշակի լեզվամշակութային առանձնահատկություններ: Հայ մամուլի տնտեսական հոդվածներում երբեմն հանդիպում են բառացի թարգմանություններ, որոնք հայ լեզվամշակույթի համար խորթ փոխաբերական կադապարներ են, իսկ երբեմն էլ զուգադրվող մշակույթներում միևնույն տնտեսական երևույթը առկայացվում է տարբեր փոխաբերական կադապարների միջոցով: Ավելին, ամերիկյան և հայ լեզվամշակույթներում տնտեսական բառապաշարի զարգացման տեմպը նույնպես շատ տարբեր է: Անգլերենը՝ լինելով միջազգային բիզնեսի լեզուն, ավելի դինամիկ է. տնտեսագիտական ոլորտի բառապաշարում նկատելի է նոր փոխաբերությունների զար-

գացման շարունակական գործընթաց, որն առաջինն արտացոլվում է հենց անզլերենում:

ЛИТЕРАТУРА

1. Гак В.Г. Языковые преобразования. – М.: Школа «Языки русской культуры», 1998. – 768с.
2. Чудинов А.П. Россия в метафорическом зеркале: Когнитивное исследование политической метафоры (1991–2000). Монография / Урал. гос. пед. ун-т. – Екатеринбург, 2001. – 238 с.
3. Чудинов А.П. Метафорическая мозаика в современной политической коммуникации: Монография / Урал. гос. пед. ун-т. – Екатеринбург, 2003. – 248 с.
4. Kövecses Z. Metaphor in Culture. Acta Universitatis Sapientiae, Philologica, Vol. 2, Issue 2, 2010. – PP. 197–220.
5. Lakoff G., Johnson M. Metaphors We Live by. London: The University of Chicago Press, 1980. – 242 p.
6. Lakoff G., Johnson M. Metaphors We Live by. London: The University of Chicago Press, 2003. – 276 p.
7. Orna-Montesinos C. Constructing professional discourse: A Multiperspective Approach to Domain-Specific Discourses. Newcastle-upon-Thyne: Cambridge Scholars Publishing, 2012. – 238 p.
8. Goodkind N., Cooban A. «Wheat prices soar as Russia-Ukraine tensions flare», CNN, Jul. 19, 2023 [Electronic resource]. – Mode of access: <https://shorturl.at/dfpFH> (Date of access: Aug. 03, 2023).
9. «Oil price hovers at four-month high», BBC, Apr. 27, 2015 [Electronic resource]. – Mode of access: <https://shorturl.at/fpqNP> (Date of access: Aug. 03, 2023).
10. Միքայելյան Ն. «Պարենամթերքի գները թռչում են ժամ առ ժամ», Հրապարակ օրաթերթ, դեկ. 06, 2017 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://bit.ly/39qgoqV> (Դիմելու ամսաթիվ՝ 12.08.2021):
11. Վարդանյան Ա. «Պետությունը՝ կառավարությունն ու դրա ղեկավարը, գնաճի զսպման հարցում անգործության են մատնվել [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://shorturl.at/uBIK4> (Դիմելու ամսաթիվ՝ 02.08.2023):
12. Մանուկյան Հ. «Հայաստանի ճախրող գներ», Առաջին լրատվական,

- դեկտ. 01, 2010 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://shorturl.at/hqvFW> (Դիմելու ամսաթիվ՝ 12.08.2023):
- 13.«Հակառուսական պատժամիջոցները», Սպուտնիկ Արմենիա, մարտ 14, 2022 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://shorturl.at/AGSU4> (Դիմելու ամսաթիվ՝ 02.08.2023):
- 14.Egan M. «US gas prices climb to highest level in nearly 10 months», CNN, Aug. 14, 2023 [Electronic resource]. – Mode of access: <https://rb.gy/g8tfid> (Date of access: Aug. 16, 2023).
- 15.«Պղնձի գները», Փաստ, դեկտ. 27, 2016 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://shorturl.at/aiGNQ> (Դիմելու ամսաթիվ՝ 03.08.2023):
- 16.Russian forces remain stalled as fighting flares in Ukraine; global oil prices skyrocket, CNBC, Mar. 07, 2022 [Electronic resource]. – Mode of access: <https://shorturl.at/chNV1> (Date of access: July 24, 2023).
- 17.Egan M. «Why gas prices are surging this month», CNN, Jan. 27, 2023 [Electronic resource]. – Mode of access: <https://rb.gy/jqfpi> (Date of access: Aug. 01, 2023).
- 18.«Ինչու է Հայաստանում ամեն ինչ թանկանում, երբ աշխարհում էժանանում է», Սպուտնիկ Արմենիա, հոկտ. 10, 2017 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://shorturl.at/hELVZ> (Դիմելու ամսաթիվ՝ 01.08.2023):
19. *Գևորգյան Հ.* «ԿԲ-ն լողացնում է դրամին. փոխարժեք, հավասար, զգա՛ստ», Հայկական Ժամանակ, փետ. 03, 2016 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://bit.ly/3kyJMOc> (Դիմելու ամսաթիվ՝ 12.08.2021):
20. *Աղասյան Ա.* «Ու՞ր են շարժվում նավթի գները», Իրատես, մայ. 28, 2017 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://shorturl.at/mHMOZ> (Դիմելու ամսաթիվ՝ 12.08.2023):
- 21.«Ռուսաստանը պատվով կանցնի նավթի գների և ռուբլու փոխարժեքի անկայունության շրջանը. Պուտին», News.am, մարտ 10, 2020 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://shorturl.at/ckIQ8> (Դիմելու ամսաթիվ՝ 12.08.2023):
- 22.Reed S. «Oil Prices Projected Higher on Supply Cuts by Saudi Arabia and Russia», the New York Times, Jul. 13, 2023 [Electronic resource]. – Mode of access: <https://shorturl.at/mvBCR> (Date of access: Aug 12, 2023).

- 23.«Oil crawls higher on U.S. hopes, but COVID rise in China caps gain», the Economic Times, Nov. 11, 2022 [Electronic resource]. – Mode of access: <https://shorturl.at/htvzE> (Date of access: Aug 02, 2023).
- 24.*Shan L.Y.* «Oil’s sharp slide has surprised markets», CNBC, May 08, 2023 [Electronic resource]. – Mode of access: <https://rb.gy/heeav> (Date of access: Jul 22, 2023).
- 25.*Lash H., Ranasinghe Dh.* «Stocks fall, ruble dives as Russia sanctions hit world markets», Reuters, March 01, 2022 [Electronic resource]. – Mode of access: <https://reut.rs/3vzCj7A> (Date of access: March 12, 2022).
- 26.«Oil prices dive to 15-month lows on bank fears», CNBC, March 16, 2023 [Electronic resource]. – Mode of access: <https://shorturl.at/ikwI2> (Date of access: Aug 12, 2023).
- 27.*Ponciano J.* «Oil Prices Plunge as Economic Woes Intensify», Forbes, November 21, 2022 [Electronic resource]. – Mode of access: <https://rb.gy/vn13t> (Date of access: Aug 01, 2023).
- 28.«Do cheaper commodities herald a recession?», The Economist, July 07, 2022 [Electronic resource]. – Mode of access: <https://shorturl.at/lwxFW> (Date of access: Aug 01, 2023).
- 29.*Մարգարյան Ա.* «Ու՛մ է ձեռնտու դոլարի փոխարժեքի անկումը», Ազատություն, հուն. 09, 2006 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://shorturl.at/deDE5> (Դիմելու ամսաթիվ՝ 01.08.2023):
- 30.*Choe S., Troise D.J.* «Stocks up, fear down on Wall Street despite Ukraine invasion», Chicago Tribune, Feb. 26, 2022 [Electronic resource]. – Mode of access: <https://bit.ly/3sm7mSB> (Date of access: March 12, 2022).
- 31.*Վարդանյան Ա.* «Արտաքին ազդակներն ու տնտեսական աճի ցուցանիշները», BlogNews.am, սեպ. 30, 2015 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://bit.ly/3vCUpWE> (Դիմելու ամսաթիվ՝ 15.08.2021):
- 32.«Տնտեսական շարաք, կամ փոխէ՛լ էք, որ հավատանք...», Հրապարակ, մարտ 25, 2012 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://shorturl.at/lzTZ9> (Դիմելու ամսաթիվ՝ 01.08.2023):
- 33.«Ռուբլին շարունակում է գահավիժել. տարադրամի հայկական շուկայում նոր ռեկորդային անկումներ են», Հայկական ժամանակ, օգոստ. 06, 2023 [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ <https://shorturl.at/iqxE9> (Դիմելու ամսաթիվ՝ 13.08.2023):
- 34.*Lash H., Ranasinghe Dh.* «Stocks fall, ruble dives as Russia sanctions hit world markets», Reuters, March 01, 2022 [Electronic resource]. – Mode of access:

<https://reut.rs/3vzCj7A> (Date of access: March 12, 2022)

35. Tan W., Turak N. «Russian ruble plunges nearly 30% against the dollar amid sanctions over Ukraine invasion», CNBC, Feb. 27, 2022 [Electronic resource]. – Mode of access: <https://shorturl.at/korZ5> (Date of access: July 12, 2023)

ԿԵՆՂԱՆՈՒՆՆԵՐՈՎ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԴԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Ա.Ս. Հարությունյան

ani.harutyunyan88@gmail.com

*Բանասիրական գիտությունների թեկնածու,
Վ. Բրյուսովի պետական համալսարանի անգլերենի ամբիոնի դասախոս,
Երևան, Հայաստանի Հանրապետություն*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննվում են կենդանիների շարժում արտահայտող բայերով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկություններն անգլերեն և հայերեն տնտեսական խոսույթում, մասնավորապես, *գնային տատանումները կենդանական շարժումներ են* փոխաբերական կաղապարի լեզվաճանաչողական դրսևորումները: Վերլուծությունը փաստում է, որ ուսումնասիրվող փոխաբերական կաղապարն առկա է ուսումնասիրվող երկու մշակույթներում, սակայն այդ կաղապարը կազմող լեզվական արտահայտությունները տարբեր են՝ մշակութային առանձնահատկություններից ելնելով:

Բանալի բառեր՝ ճանաչողական փոխաբերություն, տնտեսական խոսույթ, փոխաբերական կաղապար, աղբյուր տիրույթ, թիրախ տիրույթ:

THE CONCEPTUAL ROLE OF ANIMAL METAPHORS IN ENGLISH AND ARMENIAN ECONOMIC DISCOURSE

A. Harutyunyan

ani.harutyunyan88@gmail.com

*Candidate of Philological Sciences,
Lecturer at the Department of English of Brusov State University,
Yerevan, Republic of Armenia*

ABSTRACT

As a cognitive tool, conceptual metaphor is pervasive in economic discourse. Through summarization and observation, this paper analyzes the linguo-cognitive aspects of *price fluctuations are animal movements* conceptual metaphor pattern in English and Armenian economic discourse highlighting the cultural diversity and national coloring of conceptual metaphors. The paper draws the conclusion that the given conceptual metaphor pattern exists in both languages, but the linguistic expressions within the same pattern are different due to cultural differences.

Keywords: conceptual metaphor, economic discourse, metaphorical pattern, source domain, target domain.

Информация о статье:

*статья поступила в редакцию 9 февраля 2024 г.,
подписана к печати в номер 13 (17) / 2024 – 20.06.2024 г.*